«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 10 առ 01.10.2009թ.)

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն ապահովագրության Պայմաններում (այսուհետ՝ Պայմաններ) տեղ գտած հետևյալ բառերն ու արտահայտությունները կունենան նույն նշանակությունը.

«Մենք», «Ընկերությունը», «Ապահովագրողը»՝ «ՍԻԼ Ինշուրանս» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն:

Պայմանագրի (և /կամ Վկայագիր) գործողության ժամկետ՝ նշանակում է մեկ տարվա չափով ժամանակահատված՝ սկսած Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից կամ Պայմանագրի վերսկսման օրվանից:

Ապահովագրության օբյեկտ՝ Ապահովադրի գույքային շահերը կապված Ապահովագրված անձի կյանքին, առողջությանը դժբախտ պատահարի հետևանքով հասցված վնասների հետ:

Վերսկսման օր՝ նշանակում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ամեն հաջորդ տարի լրանալու օրը:

Ապահովագրական պատահար՝ Ապահովագրված անձին դժբախտ պատահարի հետևանքով հասցված վնաս:

Դժբախտ Պատահար նշանակում է հանկարծակի, անսպասելի, արտակարգ, առանձնահատուկ պատահար, որը տեղի է ունեցել ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում բացահայտման ենթակա պահին և տեղում:

Դժբախտ պատահար է համարվում նաև՝

ա) այն տրանսպորտային միջոցի վթարի հետևանքները, որով ճանապարհորդում է Ապահովադիրը,

բ) անհետացումը, եթե Ապահովադիրը չի գտնվել անհետացումից հետո 12 ամսվա ընթացքում, և առկա փաստերը բավարար են Ընկերության համար անխուսափելիորեն եզրակացնելու, որ Ապահովադիրը ստացել է **Մարմնական Վնասվածք** ու դրա հետևանքով մահացել, ապա Ընկերությունը պարտավորվում է անմիջապես վճարել համապատասխան հատուցումը՝ պայմանով, որ հատուցումը ստացող անձը կամ անձինք պարտավորագիր ստորագրեն առ այն, որ եթե պարզվի՝ Ապահովադիրը կենդանի է, հատուցված գումարը վերադարձվի Ընկերությանը:

Մարմնական վնասվածք նշանակում է բացահայտման ենթակա ֆիզիկական վնասվածք, որը.

ա) հետևանք է **Դժբախտ պատահարի** և

բ) ցանկացած այլ առանձին ու անկախ պատճառի, բացի հիվանդության, որն ուղղակիորեն առաջացել է այդ վնասվածքի համար անհրաժեշտ բժշկական կամ վիրաբուժական միջամտության հետևանքով և **Դժբախտ պատահարի** օրվանից 12 ամսվա ընթացքում հանգեցրել է Ապահովադրի անաշխատունակության:

Մշտական Ընդհանուր Անաշխատունակություն նշանակում է անկարողություն, որն ամբողջովին զրկում է Ապահովադրին իր գործունեությամբ զբաղվելու կամ պաշտոնական պարտականությունները կատարելու ունակությունից, որոնց համար նա ունի համապատասխան կրթություն կամ փորձ, որը տևում է 12 ամսից ավելի և նշված ժամկետի ավարտից հետո չեն դիտվում վիճակի բարելավման նախանշաններ:

Վերջույթի Կորուստ նշանակում է ձեռքի կորուստ դաստակից կամ դրա վերևի մասից, կամ ոտքի կորուստ կոճից կամ դրա վերևի մասից, ներառյալ դաստակի, ձեռքի կամ ոտքի ընդհանուր ֆունկցիայի մշտական անվերականգնելի կորուստը:

Ժամանակավոր Ընդհանուր Անաշխատունակություն նշանակում է անկարողություն, որն ամբողջովին զրկում է Ապահովադրին իր գործունեությամբ զբաղվելու կամ պաշտոնական պարտականությունները կատարելու ունակությունից, որոնց համար նա ունի համապատասխան կրթություն կամ փորձ, որը տևում է ոչ ավել, քան 12 ամիս:

Բժշկական ծախսեր նշանակում է Ապահովադրի կրած անհրաժեշտ բժշկական, հիվանդանոցային, վիրահատական, բժշկական միջամտության, մերսման, թերապևտիկ, ռենտգենյան հետազոտության կամ բուժքույրական խնամքի ծախսերը, ներառյալ բժշկական պարագաների և հոսպիտալացման ծախսերը:

2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Սույն պայմաններով Ապահովագրության տարածք է համարվում ՀՀ և ՀՀ շահերը աշխարհում:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽՍԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄ

Ընկերության պահանջի դեպքում Ընկերությանը պետք է ներկայացվի առողջ լինելու փաստը հավաստող լրացված հարցաթերթիկ:

Այն դեպքում, երբ պահանջվող փաստերը չեն ներկայացվում Ընկերությանը կամ բավարար չեն, Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում փոփոխելու ապահովագական ծածկույթի չափը կամ մերժելու վերջինիս տրամադրումը կամ սահմանելու վճարման ենթակա համապատասխան ապահովագրավճարը: Այնուամենայնիվ, ապահովագրավճարի չափը ենթակա է փոփոխման միայն Ապահովադրից համաձայնություն ստանալու դեպքում:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

Ապահովագրական գումարը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Ապահովագրական գումարը նշված է սույն պայմաններին կից Պայմանագրում:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից վճարման ենթակա ապահովագրավճարի չափը նշված է Պայմանագրում:
Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով ապահովագրական սակագինը:
Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարը Պայմանագրում նշված ժամկետում չվճարելու դեպքում Պայմանագիրը չեղյալ համարել:

6. ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

Ապահովադիրը, ՀՀ օրենսդրության համաձայն, կարող է Ապահովադրին գրավոր ծանուցում ներկայացնելու դեպքում նշանակել ապահովագրական գումարի ստացման իրավունք ունեցող շահառու(ներ)ի, այնուհետև ցանկացած ժամանակ փոխել նախկինում նշանակված շահառու(ներ)ին՝ պայմանով, որ նշված փոփոխությունն ուժի մեջ կմտնի միայն այն դեպքում, եթե այն համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը:

Եթե Ապահովադրի մահվան ժամանակ չկա որևէ շահառու, ապա ապահովագրական գումարը ստանալու իրավունք կունենան Ապահովադրի իրավահաջորդները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույնով Ապահովադրի հետ համաձայնեցվում է, որ եթե Ապահովադրի մոտ **Դժբախտ Պատահարի** հետևանքով առաջանում է **Մարմնական վնասվածք**, ապա մենք, Հատուցումների Ցուցակին համապատասխան, վճարում ենք կատարում Ապահովադրին կամ նրա Կտակակատարներին կամ Հոգաբարձուներին այն բանից հետո, երբ ամբողջ հատուցման պահանջը հիմնավորվում է սույն Ապահովագրությանը համապատասխան.

Պայմանով, որ՝
ա) յուրաքանչյուր մեկ **Դժբախտ Պատահարի** արդյունքում մեկ Ապահովադրի համար կվճարվի միայն մեկ հատուցում՝ համաձայն Հատուցումների Ցուցակի,
բ) շաբաթական հատուցումները վճարման ենթակա չեն՝ քանի դեռ ընդհանուր գումարը չի հաստատվել և համաձայնեցվել: Եթե որոշակի վճարում է կատարվել շաբաթական հատուցման համար, ապա վճարված գումարը կհանվի միևնույն **Դժբախտ Պատահարի** համար հետագայում վճարման ենթակա ընդհանուր գումարից:
Մեկ կամ ավելի **Դժբախտ Պատահարների** արդյունքում մեկ Ապահովադրի համար սույն ապահովագրության շրջանակներում վճարման ենթակա ընդհանուր գումարի չափը չպետք է գերազանցի Հատուցման Ցուցակում նշված յուրաքանչյուր դեպքի համար նախատեսված հատուցման առավելագույն չափը, բացառությամբ այն բանի, որ Ընկերությունը լրացուցիչ կհատուցի բժշկական ծախսերը:
Եթե **Դժբախտ Պատահարի** հետևանքով 12 ամսվա ընթացքում Ապահովադիրը **մահանում է,** ապա Հատուցումների Ցուցակում նշված Հավելված 1-ում և 2-ում սահմանված անաշխատունակության հատուցումների չափը որոշելու փոխարեն **վճարվում է միայն մահվան դեպքի համար նախատեսված հատուցումը:**

1. ՄԱՀ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը մահանում է դժբախտ պատահարի հետևանքով, Ընկերությունը Ապահովադրի շահառուներին վճարում է ապահովագրական գումարը՝ նվազեցնելով այն Հավելված 1-ին և/կամ 2-ին համապատասխան կատարված հատուցումների չափով, եթե այդպիսիք եղել են:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանագիրը կարող է ցանկացած ժամանակ լրացվել կամ փոփոխվել Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա, Ընկերության և Շահառուի համաձայնության դեպքում, եթե Շահառուի համաձայնությունը պարտադիր է:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Պայմանագիրը երրորդ անձին փոխանցելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է փոխանցման մասին ծանուցագիր ներկայացնել Ընկերության գլխավոր գրասենյակ:

4. ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

Ընկերությունը կարող է վարել Ապահովադրի վերաբերյալ գրանցամատյան, որն ընդգրկում է ապահովագրության էական մանրամասներին վերաբերող տեղեկատվություն:

5. ՀԱՅՑ

Ընկերությանը **ՊԵՏՔ է ՏԵՂԵԿԱՑՆԵԼ** Ապահովադրի/Ապահովագրված անձի **ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ** և տրամադրել ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է որոշելու՝ արդյոք ապահովագրական գումարը ենթակա է վճարման և որքան է կազմում ապահովագրական հատուցման չափը: Եթե ապացուցվում է, որ Ապահովադրի տարիքը փոքրացված է եղել, ապա ապահովագրական գումարը համապատասխանաբար նվազեցվում է:

Ընկերությունը կարող է Պայմանագիրն **անվավեր ճանաչել** իր բացարձակ հայեցողությամբ, **հայցերը՝ չհատուցել**, իսկ **ապահովագրավճարները՝ չվերադարձնել**, եթե հայցը կեղծ է կամ Պայմանագրի շրջանակներում հատուցում ձեռք բերելու համար օգտագործվել են կեղծ միջոցներ կամ եթե Ապահովադիրը կամ նրա անունից գործող անձը չի բացահայտել էական փաստերը կամ տրամադրել է կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկություններ:
Պայմանագրից բխող բոլոր տարաձայնությունները լուծվում են ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Պայմանագրի գործողությունը Ապահովադրի կողմից կարող է ցանկացած ժամանակ դադարեցվել՝ Ապահովագրողին 15 օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնելով, որի դեպքում Ապահովագրողի կողմից վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարի համապատասխան մասը՝ համաձայն պայմաններրում ներկայացված կարճաժամկետ ապահովագրական սակագների:
Պայմանագրի գործողության դադարեցումից հետո տեղի ունեցած ոչ մի անձի մահվան դիմաց Պայմանագրի շրջանակներում ապահովագրական հատուցում չի տրամադրվում:

7. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն պայմանների շրջանակներում մահվան դեպքը կամ անաշխատունակությունը **ՉԻ ՀԱՏՈՒԻՑՎՈՒՄ**, եթե այն ուղղակի կամ անուղղակի հետևանք է՝
ա) Ինքնասպանության կամ չհաջողված ինքնասպանության կամ կանխամտածված ինքնավնասման կամ խելակորույս վիճակում գտնվելու,
բ) Ալկոհոլի կամ թմրանյութերից կախվածության կամ ոգելից խմիչքների կամ թմրանյութերի ազդեցության,
գ) վեներական հիվանդությունների, ձեռքբերված իմունոդեֆիցիտի սինդրոմի, դրա հետ կապված բարդույթի կամ մարդկային իմունոդեֆիցիտի վիրուսի՝ անկախ դրանց անունից և վարակման աղբյուրից ու ձևից,
դ) Ճառագայթման կամ դրանից հետևող թունավորման
ե) Ապօրինի կամ հանցագործ գործողություններում մասնակցելու
զ) Պատերազմի (անկախ այն բանից՝ հայտարարված է, թե՝ ոչ), քաղաքացիական պատերազմ, ապստամբություն, խռովություն, հեղափոխություն, ռազմական կամ ապօրինի ճանապարհով իշխանության ձեռքբերում
է) Վտանգավոր մարզաձևերով զբաղվելու
ը) Օդաչուի կամ օդանավի կազմի ցանկացած այլ անդամի պես գործելու
թ) զինված ուժերում ծառայելու կամ զինված ուժերի գործողություններին մասնակցելու,

Այն դեպքում, երբ Ապահովադիրը մահանում է վերը նշված բացառություններից որևէ մեկի պատճառով, վերադարձվում է միայն մահվան օրվա դրությամբ չվաստակած ապահովագրավճարը:

8. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Ապահովագրության սույն տեսակը համապատասխանում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»ՀՀ օրենքի Հոդված 7 կետի (Ապահովագրության տեսակները և դասերը) ոչ կյանքի ապահովագրության տեսակի 1-ին դասին (դժբախտ պատահարներից ապահովագրություն):

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ

Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Հավելված 1

Մշտական Ընդհանուր Անաշխատունակություն Դժբախտ Պատահարի հետևանքով

1. Ապահովագրությունը

ա) Սույն ապահովագրության ներքո հատուցում է տրամադրվում այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանագրի գործողության ընթացքում ստանում է Դժբախտ Պատահարի հետևանքով առաջացած մարմնական վնասվածք, որը հանգեցնում է **Մշտական Ընդհանուր Անաշխատունակության**՝ հետևյալ Ցուցակին համապատասխան.

- Երկու աչքի տեսողության ամբողջական և անվերականգնելի կորուստ՝ 100% ապահովագրական գումարի նկատմամբ
- Երկու վերջույթի կորուստ՝ 100% ապահովագրական գումարի նկատմամբ
- Մեկ աչքի տեսողության և մեկ վերջույթի ամբողջական և անվերականգնելի կորուստ՝ 100% ապահովագրական գումարի նկատմամբ
- Մեկ աչքի տեսողության ամբողջական և անվերականգնելի կորուստ՝ 50% ապահովագրական գումարի նկատմամբ
- Մեկ վերջույթի կորուստ՝ 50% ապահովագրական գումարի նկատմամբ
- Մշտական ընդհանուր անաշխատունակություն (բացառությամբ մեկ կամ երկու աչքի տեսողության կամ վերջույթի (վերջույթների) ամբողջական և անվերականգնելի կորստի) հետևյալ ձևով.

  Հաշմանդամության խումբ՝
  I 80% ապահովագրական գումարի նկատմամբ
  II 60% ապահովագրական գումարի նկատմամբ
  III 25% ապահովագրական գումարի նկատմամբ

Հավելված 2

Ժամանակավոր Անաշխատունակություն Դժբախտ Պատահարի հետևանքով

1. Ապահովագրությունը

ա) Սույն ապահովագրության ներքո հատուցում է տրամադրվում այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանագրի գործողության ընթացքում ստանում է Դժբախտ Պատահարի հետևանքով առաջացած մարմնական վնասվածք, որը հանգեցնում է **Ժամանակավոր Ընդհանուր Անաշխատունակության**՝ հետևյալ Ցուցակին համապատասխան.

Ապահովադրին կատարվող հատուցման շաբաթական առավելագույն սահմանաչափը չի գերազանցում հետևյալ գումարներից նվազագույնը. Ապահովադրի հաշվարկային աշխատավարձի 70%-ը կամ 40000 ՀՀ դրամ: Շաբաթական հատուցումը վճարվում է առավելագույնը 52 շաբաթ՝ սկսած 15-րդ օրվանից:

2, Հավելյալ Ընտրանքային ծածկույթ - Բժշկական Ծախսեր

Ի հավելումն Հավելված 2-ի Ապահովագրողի կողմից յուրաքանչյուր հայցի դեպքում կհատուցվեն դրա հետ կապված՝ 80000 ՀՀ դրամը չգերազանցող **Բժշկական Ծախսերը:** Այնուամենայնիվ, եթե Ապահովադիրը պետք է հատուցում ստանա նաև այլ տեսակի ծածկույթի շրջանակներում, ապա Ապահովագրողը կրում է միայն այդ հատուցման և Հավելված 2-ի Բժշկական Ծախսերի տարբերությունը:

Այլ Բացառություններ

Ի լրումն սույն Պայմանների 7-րդ կետում նշված բացառությունների, գործում են նաև հետևյալ բացառությունները.

ա) պատահարներ, որոնք հետևանք են հոգեկան վիճակի վատթարացման, գիտակցության կորստի կամ ֆիզիկական հարվածների, էպիլեպտիկ հարվածի կամ այլ կոնվուլսիվ հարվածների,

բ) թունավորում, որը տեղի է ունեցել սնվելու ժամանակ կոկորդով անցնող կոշտ կամ հեղուկ նյութերի օգտագործման հետևանքով:

գ) երբ Ապահովադիրը ծառայում է զինված ուժերում կամ մասնակցում զինված ուժերի գործողություններին,

դ) Ապահովադրի՝ գիտակցաբար բացառիկ վտանգի ենթարկվելը (բացի մարդկային կյանքը փրկելու փորձից),

ե) հղիություն կամ ծննդաբերություն:

10. ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

1. Եթե Ապահովադիրը, առանց Ընկերությանը նախապես տեղյակ պահելու և վերջինիս գրավոր համաձայնությունը ստանալու (որի դեպքում Ընկերությունը կարող է նման համաձայնության դիմաց ողջամտորեն պահանջել լրացուցիչ ապահովագրավճար), կանոնավորապես զբաղվում է որևէ սպորտաձևով, մասնակցում ժամանցի որևէ ձևի կամ այլ միջոցառման, ինչի դեպքում տվյալ Ապահովադիրը կարող է զգալիորեն ավելի բարձր ռիսկի ենթարկվել, քան նախկինում բացահայտել էր Ընկերությանը սույն Ապահովագրության կապակցությամբ, ապա ոչ մի հատուցում չի իրականացվի վերոհիշյալ գործունեության արդյունքում տեղի ունեցած **Դժբախտ Պատահարի** կամ դրա հետևանքների համար:
2. Եթե Ապահովագրողն այլ բան չի որոշել կամ եթե նրա հետ այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել, **ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԻ** այն պատահարների կամ վիճակների համար, որոնց մասին Ապահովադիրը նախօրոք զգուշացվել է կամ որոնց հետ կապված ախտորոշվել է, ստացել է խորհրդատվություն կամ որոնց մասին Ապահովադիրն իմացել է կամ ողջամտորեն ակնկալվում է, որ պետք է իմանար սույն Ապահովագրության սկսման ժամանակ, կամ որոնցից Ապահովագրողը բուժվել է նախքան Ապահովագրության սկիզբը:
3. Ապահովագրողը պետք է որքան հնարավոր է շուտ տեղեկացվի, բայց **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 48 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ,** այնպիսի **Դժբախտ Պատահարի** մասին, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել հատուցման պահանջ: Ապահովադիրը **ՊԵՏՔ Է ՈՐՔԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՇՈՒՏ** դիմի համապատասխան որակավորում ունեցող բժիշկի: Ապահովագրողին պետք է հնարավորինս չափ շուտ տեղեկացնել Ապահովադրի մահվան մասին, եթե դա հանդիսանում է կամ համարվում է դժբախտ պատահարի արդյունք:
Բոլոր բժշկական փաստաթղթերը, որոնք առնչվում են պատահարին կամ Ապահովադրի առողջական վիճակին (սկսած ապահովագրության պահից) պետք է առաջին իսկ պահանջի դեպքում տրամադրվեն Ապահովագրողին կամ Ապահովագրողի կողմից նախօրոք ընտրված բժիշկ-խորհրդատուին:
Ապահովագրական հատուցման պահանջի ծագման դեպքում, Ապահովագրողին և նրա կողմից ընտրված բժիշկ-խորհրդատուին կթույլատրվի բժշկական քննության ենթարկել Ապահովադրին՝ այնպիսի հաճախականությամբ, ինչպիսին որ անհրաժեշտ կհամարվի:

11. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ոչ պայմանական չհատուցվող գումարներ՝
Մշտական և Ժամանակավոր Ընդհանուր Անաշխատունակության դեպքում ոչ պայմանական չհատուցվող գումար չի կիրառվում:
2. Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովադիրը/Ապահովագրված անձը պետք է **ԱՆՀԱՊԱՂ**, բայց **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 48 ԺԱՄՎԱ** ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին պատահարի մասին

3. Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է սույն Պայմանագրի, Ապահովադրի անձը հաստատող փաստաթղթի և բոլոր այլ անհրաժեշտ փաստաթղթերի ստացման հիման վրա, 15 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտ փաստաթղթերի թվին են պատկանում ՀՀ գործող օրենսդրության համաձայն հաշմանդամության խումբը որոշող լիազորված իրավասու հանձնաժողովի եզրակացությունը, բժշկական հիմնարկի տեղեկանքը/էպիկրիզը, հիվանդության պատմությունը և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

4. Ապահովագրողը որևէ պատասխանատվություն չի կրում բժշկական հիմնարկների կամ լիցենզավորված մասնավոր գործող բժիշկների առաջարկած ծառայությունների որակի և ախտորոշման համար, որոնք ընդունվել են Ապահովադրի կողմից:

5. Ապահովադրի կողմից բժշկական հիմնարկներին, ինչպես նաև լիցենզավորված մասնավոր գործող բժիշկներին դիմելուց հրաժարվելու դեպքում Ապահովագրողն ազատվում է տվյալ ապահովագրական պատահարի գծով հատուցման վճարումից:

6. **ԵԹԵ** դժբախտ պատահարի հետևանքով Ապահովադիրը/Ապահովագրված անձը **ՄԱՀԱՑԵԼ Է,** Ապահովագրողին **պետք է** այդ մասին **ՏԵՂԵԿԱՑՆԵԼ 48 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**, եթե անգամ նա անձամբ իմացել է դժբախտ պատահարի մասին:

7. Ապահովագրողը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովադրին հատուցման մերժման մասին վերջինիս կողմից հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 օրվա ընթաքում:

8. Մասնակցի ցանկացած խաբեություն, տեղեկություններ թաքցնելը կամ դիտավորյալ կեղծ տեղեկությունների տրամադրումը՝ կապված ապահովագրական հարցաթերթիկի, ապահովագրությանը վերաբերող այլ տեղեկատվության կամ հատուցման հետ, անվավեր է դարձնում սույն պայմանագիրը և հիմք ծառայում ցանկացած հայցի մերժման համար:

Դադարեցում հետևյալ ժամկետներում.										
Ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10-12
Ապահովագրավճարի փոխհատուցում (%)	75%	70%	60%	50%	40%	30%	20%	15%	10%	0%